ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի շնորհավորական ուղերձը երեխաների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ

01.06.2026

Սիրելի՛ երեխաներ,
Ջերմորեն շնորհավորում եմ ձեզ Երեխաների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ:
Այս օրը ևս մեկ առիթ է ընդգծելու, որ յուրաքանչյուր երեխա արժանի է սիրով, հոգատարությամբ և անվտանգ միջավայրում մեծանալու, կրթություն ստանալու, երազելու և իր կարողությունները լիարժեք դրսևորելու հնարավորությանը:
Երեխաները մեր ամենամեծ հարստությունն են, մեր ներկան ու ապագան: Նրանց ժպիտները, անկեղծությունն ու անսահման երազանքները մեզ պարտավորեցնում են կառուցել ավելի բարեկեցիկ, անվտանգ և հնարավորություններով լի պետություն:
Այս տոնական օրը մաղթում եմ բոլոր երեխաներին անհոգ ու երջանիկ մանկություն, առողջություն, հաջողություններ և բազմաթիվ գեղեցիկ ձեռքբերումներ: Թող ձեր կյանքը լի լինի սիրով, ջերմությամբ, նոր բացահայտումներով և իրականացված երազանքներով:
Շնորհավոր տոնդ, սիրելի՛ փոքրիկ սերունդ: Դուք մեր հույսն եք, մեր ուժն ու վաղվա օրվա վստահությունը: